

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԶՐՀԵՂԵՂԻ ԱՌԱՍՊԵԼԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ
ՆԱԽԱՀԱՅՐԵՆԻՔԸ

Ս. Հ. ՈՒՄԱՌՅԱՆ

Հնդեվրոպական մեծատարած նախահայրենիքի հարաբերական կենտրոնը հղել է հյուսիսային Միջագետքի լեռնաշղթան¹։ Նախալեզուն կրող ժողովուրդը մ. թ. ա. VIII հազարամյակից վարում էր նստակյաց կյանք, զբաղվելով անասնապահությամբ, հողագործությամբ և մետաղամշակությամբ²։ Հնդեվրոպացիները նախահայրենիքում ստեղծեցին իրենց մշակույթը, պաշտամունքն ու դիցաբանությունը³։ Բայց նրանք մեկուսացված չէին ապրում և շփման մեջ էին Նիփրատ ու Տիգրիս գետերի մերձափնյա բարեբեր հողերում ապրող Միջագետքի ոչ հնդեվրոպական ժազումով հնագույն ժողովուրդների հետ։ Նման պայմաններում անխուսափելի էին լեզվական, մշակութային ու հոգևոր ազդեցությունները, փոխառությունները։

Հնդեվրոպացիները բնության օրինաչափ երևույթները՝ գիշերն ու ցերեկը, ծնունդն ու մահը, տարվա եղանակների հերթագայումը, երաշտները, երկրաշարժերը, համաճարակներն ու հեղեղումները համարել են աստվածների կամքի արտահայտություն։ Դրանցից էր աշխարհի ժողովուրդներին սարսափ պատճառած առասպելական համաշխարհային ջրհեղեղը, որը տեղի է ունեցել Միջագետքում։ Անգլիացի հնագետ Լ. Վուլլին Շումերի Ուր քաղաքի տեղանքում պեղումներ կատարելով գտել է նախաշումերյան կուլտուրայի հետքեր։ Հստաշումերական առասպելի՝ նախաշումերներն ապրել են Նիփրատ և Տիգրիս գետերի ափերին։ Լ. Վուլլին գրում է, որ «Նախաշումերները շումերներին հաղորդեցին համաշխարհային ջրհեղեղի առասպելը, որովհետև հենց նրանք էին ենթարկվել աղետի, և մեկ ուրիշը չէր կարող ստեղծել նման առասպել»⁴։

Համաշխարհային ջրհեղեղի առասպելը պահպանվել է մ. թ. ա. III հազարամյակի շումերական «Գիլգամեշ» էպոսում, որի մի քանի պատասոկ վերապրուկներ ներկայացնում են նախաշումերյան ջրհեղեղի առասպելական հերոս Զիուսուդրային⁵։ Վերջինս, ըստ առասպելի, փրկվում է Հայկական լեռնաշխարհում գտնվող Մաշու լեռան վրա։ Շումերների միջոցով այդ առասպելը տարածվել է սեմական ցեղերի՝ աքքադացիների և բաբելացիների մեջ։ Նրանց ավանդույթների համաձայն ջրհեղեղի հերոսը Ուտնապիշտիմն է, որը փրկվում է Հայկական լեռնաշխարհում գտնվող Նիծիր լեռան վրա։ Իմիջիպլոց նրան Գիլգամեշը համարել է իր նախնին, որից և խնդրել է ցույց տալ Նիփրատ գետի ակունքն ու «անմահական պտուղի» երկիրը։ Այս բոլորից հետո կարելի է եզրակացնել։

1. Նիփրատ գետի ակունքները գտնվում են Հայկական լեռնաշխարհում։
2. Զիուսուդրան փրկվում է հարավային Հայաստանի սահմանը եզերող Մաշու լեռան վրա⁶, որը նույն Մասիուս լեռնաշղթան է (Տուր-Աբդին)։ 3. Ուտնապիշտիմի փրկության լեռը Նիծիրն է⁷ (բառացի՝ «աստծու լեռ»), սեմերեն նածիրի-

¹ Т. В. Гамкрелдзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, с. 865—869.

² Նույն տեղում, էջ 687—703։

³ Նույն տեղում, էջ 776—871։

⁴ Л. Вулл, Ур Халдеев, М., 1961, с. 33, 2. Կոստանովսկի, Բիրլիական ավանդապատումներ, Երևան, 1970, էջ 41, 103—106։

⁵ Д. В. Редер, Мифы и легенды древнего Двуречья, М., 1965, с. 41, 67, 116.

⁶ Նույն տեղում, էջ 92։

⁷ Նույն տեղում, էջ 97։

նա, հայերեն Մծբին՝ Մասիուս լեռնաշղթայի միջին մասում: 4. Գիլգամեշն Ուտնապիշտիմի մատնացուցումով «անմահական պտուղը» քաղում է մի ծովի հատակից, որը կամ Վանա կամ էլ՝ Ուրմիո լիճն է:

Ավելացնենք նաև այն, որ մ. թ. ա. III հազարամյակի կեսերին Սարգոն Աքքադացի թագավորն արշավելով դեպի հյուսիսի երկրները, Հայաստանի տարածքից տարել է այնպիսի պտղատու ծառատեսակներ, որպիսիք Միջագետքում չկային՝ խնձորենի, թթենի, սալորենի⁸: Իսկ Գիլգամեշի մասին էպոսում տեղ գտած «անմահական պտուղը» վայրի սալորենին է՝ Հայաստանի ծառատեսակներից: Վերահիշյալ լեռները, գետը, «անմահական պտուղը» և ծովը գտնվում էին Հայկական լեռնաշխարհում:

Միջագետքում մ. թ. ա. IV հազարամյակում երևան եկան սեմական ցեղերը: Նրանք բնակություն հաստատելով շումերների երկրում, յուրացրին վերջիններիս կուլտուրան: Միջագետքից համաշխարհային ջրհեղեղի մասին առասպելն անցավ Քանան, որտեղի հին հրեաներն այն վերափոխելուց հետո ջրհեղեղի առասպելական հերոսի անունը կնքեցին Նոյ: Այս անունն Աստվածաշնչի միջոցով տարածվեց ամբողջ աշխարհում: Նոյ անվան համասեմական *nwh արմատը նշանակել է «հանգիստ», «խաղաղ»⁹, այսինքն հետջրհեղեղյան վիճակ, որից էլ առաջացել է nō³ h Նոյ անունը, որը փրկվել է Արարատ լեռան վրա:

Այսպիսով, համաշխարհային ջրհեղեղի երեք հերոսների փրկության լեռան գագաթները գտնվում էին Վանա լճից հարավ, հնդեվրոպացիների նախահայրենիքում, որտեղ հետագայում կազմավորվեցին հայկական Ռշտունիք, Մոկք, Անձևացիք, Աղձնիք, Կորձայք, Կադմոսի տուն նահանգները և դրանց հարակից որոշ շրջաններ¹⁰: Հնդեվրոպացիները Միջագետքի հյուսիսի ջրառատ և լեռնային շրջաններում բնակվելուց զատ հավանաբար իջել են նաև Սփրաթի Երզնիքի միջին շրջանները:

Կասկած չկա, որ առասպելական ջրհեղեղի ակունքները եղել են Միջագետքի լեռնային շրջանները: Այդտեղից է սկսվել գարնան ձնհալի և հորդառատանքներն ու բազմաթիվ լեռնային գետերի հեղեղը դեպի Սփրաթի գետերը, որոնք դուրս գալով հունից ավելել են մինչև շումերյան ցեղերի բնակավայրերը: Լ. Վուլլիի հաշվումներով հեղեղի (բարձրությունը 8 մ) տակ է մնացել մոտավորապես 500 կմ երկարությամբ և 150 կմ լայնությամբ հարթավայրային տարածք¹¹: Հետևապես, ջրհեղեղն ընդգրկել է հարթավայրային գոտիներում ապրող հնդեվրոպացիների ու Միջագետքի մինչև շումերյան ոչ հրդեհվրոպական ցեղերի բնակավայրերը: Միայն չի լինի եզրակացնել, որ ջրհեղեղի առասպելը ստեղծվել է հնդեվրոպացիների նախնիների միջավայրում, երբ Միջագետքում շումերներ չկային: Իսկ «Գիլգամեշ» էպոսում Զիուսուդրային նվիրված պատառիկները հնդեվրոպացիների առասպելի մնացուկ են:

Հնդեվրոպացիները «աստված» բառը կոչել են *t^h1eʷ (—*d1eʷ), «անձ»՝ *su, որոնք համադրվելով *t^herH «հաղթել» կամ «անցնել» բառի հետ¹², տվել են Tiesutra ապա Diesudra անունը, որը կնշանակի «անձրևի աստված»՝ հաղթեց (անցավ) և, կամ փոխաբերական իմաստով՝ ջրհեղեղի նահապետ հաղթեց (անցավ): Հնդեվրոպական նախալեզվում նման բառակազմություններ եղել են, մասնավորապես կապված դիցապաշտության հետ՝ «վիշապաբաղ» աստվածներին վերաբերող տեքստերում¹³: Այսպես, «աստվածների»

⁸ Ն. Ադամս, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 27:

⁹ С. С. Майзель, Пути развития корневого фонда семитских языков, М., 1963, с. 116, 264, 2. Ահառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ., Երևան, 1948, էջ 82—83:

¹⁰ Հ. Հյուբշման, Հին հայոց տեղանյ անունները, Վիեննա, 1901, էջ 69—76, 154, 167—168, 179—184, 216—217:

¹¹ Л. Вуллх, նշվ. աշխ., էջ 35:

¹² Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, նշվ. աշխ., էջ 321, 382, 793:

¹³ Նույն տեղում, էջ 226, 242, 679—680, 866:

ըմպելիքը հաղթահարում է մահը՝ արտահայտությունը բառակազմվել է *Hnek^h—t^hH, որը հունարենում կարճվելով դարձել է «նեկտար»՝ ստանալով «աստվածներն անուշահոտ վարդե ըմպելիքը» իմաստը։ Այնուհետև *Su-t'ieu նշանակել է «արևոտ լավ օր», իսկ դրա հակառակը՝ «անձրևոտ եղանակ»՝ *t'us—t'ieu¹⁴։

Մեր համոզմամբ հնդեվրոպական Դիեսուդրա անունը d>Z հնչյունափոխությունը շումերերենում դարձել է Զիուսուդրա, որովհետև շումերերենում նման հնչյունափոխությունն օրինաչափ էր¹⁵։

Ինչպես գիտենք, հնդեվրոպացիների նախահայրենիքի, ապա հայերի բնօրրանի անունը Արարատ է, որը մեզ է հաղորդել Նրեմիա մարգարեն (մ. թ. ա. VI դ.)¹⁶։ Բայց այդ անունն ալեկի վաղնջական պատմություն ունի։

Մեր կարծիքով Արարատ տեղանունը հնդեվրոպական ժագում ունի։ Այն անվանակազմվել է *ar «չուբ» և *art^h «գետ» արմատներից՝ *ta տեղանվանական և ջրանվանական հոգնակերտով։ Հետևապես Arartta կնշանակի «գետերի երկիր» կամ «ջրային տարածություն»։ Այդտեղ էր «ջրերի», «ծովերի» հ.—և, Aram Na pat աստծու գահանիստը՝ հայկական «նապատական լեռներ» |Արարատ գագաթից արևելք, Կուրճալք գավառում|։

Նշված *ta հոգնակերտով Հայկական լեռնաշխարհում անվանակազմվել են բազմաթիվ տեղանուններ՝ Արխիտա, Խայիպուտա, Տամատա¹⁷ և այլն, իսկ ջրանունները և՛ նշված տարածքում, և՛ նվրոպայում՝ Արմենտա, Բրենտա, Ալտա և այլն¹⁸։

Արարատ երկիրը գտնվել է գետերի ու խոշոր լճերի գոտում։ Նրա արևելյան շրջանը եզերվում էր Ուրմիա լճով, Մեծ Զաք գետով և բազմաթիվ վտակներով։ Հյուսիսում Վանա լիճն էր, Արևելյան և Արևմտյան Տիգրիս գետերն իրենց բազմաթիվ վտակներով, իսկ Արևմուտքում՝ Եփրատը, նույնպես իր վտակներով։ Բազմաթիվ գետերով ու լճերով լի այդ տարածքը հնդեվրոպացիները անվանել են Arartta։ Հայերենում հնդեվրոպական Arartta անվան վերջին a հնչյունի դրափոխությամբ ստացվել է Արարատ, բայց քանի որ հայերենը չի սիրում կից բաղաձայններ, մասնավորապես անվանավերջում, ուստի խուլ պալթականներից մեկի՝ սղումով ստացվել է Արարատ։

Արարատ անունը մեզ է հասել գրավոր աղբյուրների միջոցով։

Աստվածաշնչում ասված է, թե Ասորեստանի Սենեբերիմ թագավորի որդիները սպանեցին յոթերորդ ամսվա 17-րդ օրը տապանը նստեց Արարատ լեռան վրա²⁰։ Այդ այն լեռն է, որը Սարգոն II-ի տարեգրության մեջ կոչվում է Արարտու²¹։ Նույն թագավորը նշված տարածքում հիշատակել է յոթ լեռների միջով հոսող Արատտա գետանունը²²։ Հին պարսիկներն Արարատ լեռը համարել են Նուհի քուհնոյի լեռ։ Բացի վերոհիշյալներից, Ասորեստանի Սալմանասար Ա (մ. թ. ա. XIII դ.) թագավորի տարեգրության մեջ Արարատի փոխարեն Ուրու-

¹⁴ Նույն տեղում, էջ 321, 322։

¹⁵ «Вопросы языкознания», 1954. № 5, с. 50; «Вестник древней истории», 1964, № 3, с. 254, 257։

¹⁶ Աստվածաշնչում, է. Դույա, 1915, էջ 335։

¹⁷ В. Н. Хачатрян, Восточные провинции хеттской империи, Ереван, 1971, с. 108—110, 127, 148։

¹⁸ О. Н. Трубачев, Название рек правобережной Украины, М., 1968, с. 167, 208—209։

¹⁹ Աստվածաշնչում, էջ 437։

²⁰ Նույն տեղում, էջ 7։

²¹ «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Երևան, 1971, էջ 13, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 7, Երևան, 1981, էջ 267—268։

²² Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, նշվ. աշխ., էջ 325։

ատրի է²³, իսկ Աղադներարի Բ (մ. թ. ա. X—IX դդ.) թաղավորի արձանագրության մեջ՝ Ուրարտու²⁴:

Աստվածաշնչում իբր Ուրարտուի փոխանցումը Արարատի մասորետական ձայնավորման արդյունք է²⁵: Սակայն սեմական լեզուներում հայկական լեռնաշխարհի հարավի որոշ հնագույն տեղանուններ ենթարկվել են $a > u$ հնչյունափոխության, ինչպես՝ Ափում՝ > Ուպում (Շուպրիայի մայրաքաղաքը), Արմեխատե > Ուրմեխատե, Արմախ > Ուրմեխատե և այլն:

Հնդեվրոպական լեզուների ձևավորման ժամանակ, մոտավորապես մ. թ. ա. V—IV հազարամյակում Արարատ անունը տարածվել է նրա արևելյան մասի վրա, իսկ Արևմտյան Տիգրիսի շրջանը՝ Աղձինք նահանգն ու Սասունի լեռնային տարածքը կոչվել է Arma, որը հնդեվրոպական ժագումով *ar «շուր» և *ma տեղանվանական և ջրանվանական հոգնակերտով նշանակել է «շրերի» կամ «գետերի երկիր», ինչպիսի անուն ունեն Արարատը: Արմա անվան վրա հետագայում ավելացել է *na տեղանվանական նոր ածանց և հաճախ դրա փոխարեն գործածվել է Արմանա ձևը: Նման ածանցով են անվանակազմվել՝ հալիսանա, Պարմանա, հարսումանա տեղանունները²⁶: Այդ տարածքն աքքադացիներն անվանել են Armanu²⁷:

Աքքադացի Նարամսինը (մ. թ. ա. 2250 թ.) գրում է, որ իր դեմ ծառացած 17 երկրների մեջ էր Արմանիի թագավորը²⁸: Մ. թ. ա. III հազարամյակի կեսերի էբլայի (Հյուսիսային Սիրիա) արձանագրությունները վկայում են, որ Արմե երկրի «հայրողիները» ոսկու, խեցեղենի և երփներանգ գործվածքեղենի առևտուր էին անում էբլա քաղաքի շուկաներում: Առաջին անգամ էբլայի մ. թ. ա. III հազարամյակի արձանագրությունները վկայում են, որ այ կամ խայցեղանվան և նրա Արմե կամ Արմի բնօրրանի մասին²⁹: Իսկ Դարեհ Ա Վշտասպանի (մ. թ. ա. VI դ.) Բեհիսթունյան և Նաղշե Ռուստամի արձանագրությունների պարսկական տեքստում Արմա երկրանունը հիշվում է Արմնիա (Արմինա) ձևով³⁰:

Քանի որ հնդեվրոպական և սեմական ցեղերի մեջ Արմա կամ Արմանա երկրանունն ավելի էր տարածված, քան հնագույն Արարատը, ուստի պարսիկների և ապա հույների միջոցով Արմանա տեղանունով հայերին կոչեցին արմեններ: Սակայն այդ անունը հայերը չընդունեցին, որովհետև վաղնջական ժամանակներից հնդեվրոպական նախահայրենիքում ստացել էին հայ ցեղանունը:

Արարատ երկրին տրված երրորդ անունը Նաիրի է: Ասորեստանի Թուկուլթի Նինուրթա Ա (մ. թ. ա. XIII դ.) և Թիգլաթպալասար (մ. թ. ա. IX դ.) թագավորներն Արարատ երկիրն անվանել են Նաիրի: Այդպես է անվանել նաև ուրարտական Մինուա թագավորը՝ Քելիշինի երկրեզվյան արձանագրության մեջ (մ. թ. ա. IX դ.)³¹: Նաիրի անունը ծագում է համասեմական *nahr «գետ» կամ «ջրային տարածություն» արմատական բառից³²: Հետևապես Նաիրի նշանակել է «գետերի երկիր», ինչպիսի ծագում ունեն Արարատ-Արմանա տեղանունները:

²³ Я. А. Манандян, О некоторых спорных проблемах истории древней Армении, Ереван, 1956, с. 6; Г. А. Меликишвили, Наири-Урарту, Тбилиси, 1954, с. 150—151; Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, с. 13.

²⁴ И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968, с. 140.

²⁵ Б. Б. Пиотровский, Урарту, Ереван, 1944, с. 29.

²⁶ В. Н. Хачатрян, *Եղվ. աշխ.*, էջ 823, 135.

²⁷ «Древний Восток», т. 4, Ереван, 1983, с. 25.

²⁸ «Палестинский сборник», вып. 13, М., 1965, с. 65—66.

²⁹ «Պատմա-բանասիրական հանդես», 1983, № 4, էջ 31.

³⁰ Գ. Ա. Նալբանդյան, Հին պարսիկներ, Երևան, 1963, էջ 128, 140.

³¹ Г. А. Меликишвили, *Եղվ. աշխ.*, էջ 125—128.

³² С. С. Майзель, *Եղվ. աշխ.*, էջ 159—160.

МИФ О ВСЕМИРНОМ ПОТОПЕ И ПРАРОДИНА АРМЯН

С. О. УМАРЯН

Резюме

В шумерийском эпосе «Гильгамеш» сказание о Зиусудре—остаток индоевропейского мифа. Сопоставление терминов *tjeu (-*djeu) «бог», *Su «дождь» и *t^herH «победить» или «проходить» дало Tiesutra и, следовательно, имя бога Diesudra, что означало «бог дождя победил (прошел)» или метафорически «бог потопа победил (прошел)». Индоевропейское имя Диесудра благодаря чередованию d > z превратилось в шумерийском языке в Зиусудру. Таким образом, создателями мифа о всемирном потопе были индоевропейцы. Многоводное пространство к западу от реки Евфрат до озера Урмия пользовалось и.-е. названием Agarṭta, образованным от корней *ag «вода» и *art^h «река», и показателем множественного числа частицей *ta. Метатеза звука a в окончании имени Agarṭta дала в армянском Արարատ, которое сохранилось без изменений в Библии.

Название Арарат в переводе на семитские языки дало Наири от корня *nahṛ, что означает «водное пространство».

Западные территории Арарата (Ахдзник—Сасун и западные окрестности озера Ван) во времена становления и.-е. диалектов назывались Агта: *ag «вода», *ta—показатель множественного числа. Следовательно, Агта и далее Агтапа означает страна рек. По названию этой местности древние народы и стали называть армян арменами.